ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Լ. Մկրտչյան -ին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

Զոհրաբ Պապոյանից -ից

(դիմողի անուն, ազգանուն)

Արցախ գեղ. 17 59-70-49

(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

papoyanznarik@gmail.com

«Գրքույկ և նուվեաց. կարգ. կենտր.»

(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Խորհրդի նախագահի անունով
2. Տվյալ կազմակերպության կանոնադրության պետական գրանցման համարը.
3. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ.
4. Մոտիվացիոն նամակ
5. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝ Զ. Պապոյան

«03» 05 2016թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № 10802-16
04 05 16

Կազմված է 29.02.2016թ.
բաղկացած է 10 թերթից

տպագրված է 2 օրինակ
Օրինակ --1--

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Կրթական և մասնագիտական զարգացման կենտրոն» գիտա-կրթական հասարակական կազմակերպության հիմնադիրների 29.02.2016թ. կայացած հիմնադիր ժողովի որոշմամբ արձանագրություն թիվ 1

«Կրթական և մասնագիտական զարգացման կենտրոն» գիտա-կրթական հասարակական կազմակերպության նախագահ՝ Ռուբեն Միրզախանյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂ
«22» 03 2016թ.

գրանցման համար՝ 211.131.892740

վկայական՝ 03ԱԼ042740

հարկ վճարողի հաշվառման համար՝ 026

Գործակալության պետ

Կամո Ադամյան ----------

«ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԳԻՏԱ-ԿՐԹԱԿԱՆՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2016թ.

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ՝ ՎԵՐՋԻՆ 2 ՏԱՐՈՒՄ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Կրթության և մասնագիտական զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպության գործունեությունը հիմնականում ուղղված է կրթության որակի բարձրացմանը հասարակական կյանքում առկա սոցիալական խնդիրների լուծմանը: Ի սկզբանե հասարակական կազմակերպության կազմը կամավորների և նախաձեռնող խմբերի միջոցով իրականացրել է մի շարք կրթական ծրագրեր, որոնք ուղղված են եղել կրթության ոլորտի բարեփոխումներին: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել սահմանամերձ համայնքների դպրոցների ուսուցիչների շարունակական վերապատրաստմանը, ավագ դպրոցի աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը և այլն: Հիմք ընդունելով նախաձեռնող խմբի վերոնշյալ արդյունավետ կազմակերպված աշխատանքները, մենք ձեռնամուխ եղանք հիմնել հասարակական կազմակերպություն և այդպիսով ավելի ընդլայնել գործունեության շրջանակները:

2016-ից հիմնվեց <<Կրթության և մասնագիտական զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպությունը, որը ստեղծման առաջին իսկ օրերից ակտիվորեն համագործակցում է գիտակրթական տարբեր օջախների, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ:

<<Կրթության և մասնագիտական զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպությունը ինքնակազմակերպվող մարմին է, որը դեռևս չի ֆինանսավորվել որևէ կազմակերպության կողմից:

<<Կրթության և մասնագիտական զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպության հիմնական նպատակներից է կրթության և մանկավարժության, գիտության, մշակույթի, սոցիալական ոլորտներում բարձր որակավորմամբ, աշխատաշուկայում միջազգայնորեն մրցունակ մասնագետների պատրաստումը, վերապատրաստումը, մասնագիտական որակավորման բարձրացումը ինչպես նաև հումանիտար, մշակութային հասարակական գործունեության իրականացումը, արտասահմանյան գիտակրթական հաստատությունների հետ համագործակցության և փորձի փոխանակման կազմակերպումը, համատեղ

գիտական և ուսումնական միջոցառումների ու համալիր ծրագրերի իրականացումը:

Կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններն են `

- Ուսուցիչների վերապատրաստումներ
- Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ
- Անձնային և մասագիտական զարգացման վերապատրաստումներ
- Մասնագիտական կողմնորոշում
- Կրթական ծրագրերի նախագծում
- Մեթոդական նյութերի կազմում
- Կրթության ոլորտի հետազոտական աշխատանքների իրականացում
- Բուհական կրթության խորհրդատվություն

ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում

Կարևորելով ՀՀ կրթության ոլորտում և հասարակական կյանքում կրթության և գիտության նախարարության մեծ ներդրումն ու բարեփոխումները՝ հատկանշական է Բոլոնիայի գործընթացին միանալը և դրանից հետո գործընթացի պահանջներին համապատասխան ՀՀ միջին, բարձրագույն և շարունակական կրթական համակարգում խորքային փոփոխությունների իրականացումը: Կարևորագույն ձեռքբերումներից է Եվրոպական կրթական տարածքին Հայաստանի ինտեգրման ուղղությամբ կատարվող եվրոպական չափանիշներին համապատասխան որակի գնահատման և ապահովման ազգային համակարգի ստեղծումը: Գրեթե բոլոր բուհերում ստեղծվել են որակի ապահովման ներբուհական միավորներ: Հետամուտ լինելով ԿԳՆ որդեգրած քաղաքականությանը <<Կրթության և մասնագիտական զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպությունն իր գործունեությունն ուղղել է բուհերի որակի գնահատման և ապահովման մեխանիզմների ներդրման աշխատանքներին:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ապահովման գործընթացում կարևոր է մատնանշել հավատարմագրման կարգի համաձայն հավատարմագրումների իրականացումը:

Կարևոր ձեռքբերում է ՀՀ ԿԳ նախարարության և ԱՓՇԱՏԿ-ի կողմից համատեղ նախապատրաստած և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված բուհական ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միասնական հավելվածը: Կրեդիտների կուտակման և փոխանցման, որակի գնահատման և ապահովման համակարգերի ներդրման, ճանաչման թափանցիկ ընթացակարգերի, ինչպես նաև դիպլոմի համաեվրոպական հավելվածի ներդրման միջոցով խթանվում է ուսանողների և դասախոսների շարժունությունն ու Հայաստանի բարձրագույն կրթական համակարգի գրավչությունը:

<<Կրթության և մասնագիտական զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպությունը վարելով ուսանողակենտրոն քաղաքականություն, կարևոր առաջընթաց է համարում ուսանողներին աջակցող և խթանող կառույցների ստեղծումը ազգային մակարդակում: Խիստ կարևորվում է ԿԳՆ կողմից ձեռնարկված քայլերը իրականացնելու Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի կարևորագույն նպատակներից մեկը՝ ուսանողների մասնակցությունը բուհի ակադեմիական և կառավարման գործընթացներին ապահովելը և ուսանողների դերի և ներգրավվածության բարձրացումը ՀՀ-ում:

Ակտիվ աշխատանքներ են ծավալվել հրապարակայնության և տեղեկատվության ապահովման նպատակով: ՀՀ ԿԳ նախարարությունը համակարգված և հետևողականորեն ամբողջական տեղեկատվություն է տրամադրում հասարակության բոլոր շահագրգիռ կողմերին Հայաստանի Եվրոպական բարձրագույն տարածքին ինտեգրվելու ուղղությամբ կատարվող աշխատանքների վերաբերյալ: Վերջին տարիներին ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպել է Բոլոնիայի գործընթացին վերաբերվող և կրթության համար արժեքավոր այլ մի շարք գրքերի թարգմանություններ և հրատարակություններ: ՀՀ կրթական ոլորտում մեծ դեր ունեն պարբերաբար ԿԳՆ կողմից կազմակերպված սեմինար-խորհրդակցությունները, խորհրդաժողովները, կոնֆերանսները՝ նվիրված Եվրոպական բարձրագույն տարածքի ստեղծման և Հայաստանի այդ տարածքում ինտեգրման տարբեր հարցերին, որոնց աշխատանքներին մասնակցում են հրավիրված ու ճանաչված փորձագետներ, արտերկրի ներկայացուցիչներ:

Վերջին տարիներին կարևոր ձեռքբերում է նաև շարունակական կրթության ներդրումը: 2011 թ. Բոլոնիայի համանախագահության շրջանակներում ՀՀ ԿԳ նախարարությունը իրականացրել է մի շարք լայնամաշտաբ միջոցառումներ: Նշանակալից քայլեր են արվել նաև միջպետական և միջազգային համագործակցության շրջանակներում: Մեծ ձեռքբերում է ՀՀ կրթության և գիտության ոլորտներում համագործակցության նպատակով շուրջ 20 եվրոպական երկրների հետ կնքված միջպետական պայմանագրերը: Միջպետական պայմանագրերը մեծապես նպաստում

են ուսանողների, դասախոսների և գիտական աշխատողների շարժունությանը, ուսումնական հաստատությունների միջև գործնական կապերի ստեղծմանը և այլն: Որպես հաջողված փորձի վառ օրինակ կարելի է նշել ԵՄ-ի Տեմպուս (Tempus) ծրագիրը:

ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՆԱՄԱԿ

<<Կրթության և մասնագիտական զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպությունը մոտիվացված է ներգրավվելու ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում, քանի որ բարձր է գնահատում կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին ուղղված յուրաքանչյուր գործընթաց: Ի սկզբանե հասարակական կազմակերպության կազմը կամավորների և նախաձեռնող խմբերի միջոցով իրականացրել է մի շարք կրթական ծրագրեր, որոնք ուղղված են եղել կրթության ոլորտի բարեփոխումներին: Հիմք ընդունելով նախաձեռնող խմբի արդյունավետ կազմակերպված աշխատանքները, մենք ձեռնամուխ եղանք հիմնել հասարակական կազմակերպություն և այդպիսով ավելի ընդլայնել գործունեության շրջանակները:

Հասարակական կազմակերպության կազմում ընդգրկված անդամները բարձր որակավորում և փորձ ունեցող մասնագետներ են , որոնք պատրաստ են իրենց ներուժն ու փորձը կիսել կրթության բնագավառի օղակների հետ: Ներգրավվելով ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում <<Կրթության և մասնագիտական զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպությունը ամբողջապես պատրաստ է ներդնել իր ամբողջ եռանդը և ռեսուրսները ի շահ ՀՀ կրթական համակարգի բարեփոխումների:

<<Կրթության և մասնագիտական զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպության անդամները սիրով պատրաստ են կիսել միջազգային փորձի արդյունքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև համագործակցության հնարավորություններ ստեղծել միջազգային մի շարք հիմնադրամների, բուհերի, կազմակերպություններ և ՀՀ կրթական հաստատությունների միջև:

<<Կրթության և մասնագիտական զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպությունը շահագրգռված է մշակել և ներդնել կրթության ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման ընթացակարգ՝ հիմնվելով միջազգային

փորձի վրա ինչպես նաև խրախուսել կրթության ոլորտի հետազոտական-մեթոդական աշխատանք կատարող մասնագետներին և ստեղծագործական որոնումներով և ծրագրերով սովորողներին, օգնել հանրապետության նորարար և ստեղծագործ մասնագետներին՝ իրականացնելու իրենց մանկավարժական առաջադեմ մտահղացումներն ու գաղափարները,

Կազմակերպության հիմնական նպատակներից է հանրապետության դպրոցներում և հասարակության լայն շրջաններում պրոպագանդել մանկավարժության առաջադիմական հայեցակետերը և ուսուցման եղանակները, նպաստել դրանց ներդրմանը և իրականացմանը, դպրոցների միջև փորձի կենդանի փոխանակմանը, գործնական կապեր հաստատել կրթության բնագավառում գործող այլ կազմակերպությունների և բարեգործական միությունների հետ

Մենք մոտիվացված ենք հանդես գալ ուսումնական-կրթական գործի նորովի կազմակերպման առաջարկներով:

Իրավաբանական անձի պետական գրանցման

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա1042740

Իրավաբանական անձի անվանումը
«ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԳԻՏԱ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գրանցված է Պետական ռեգիստրի
կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման համարը **211.171.892740**
Գրանցման ամսաթիվը **2016-03-22**
Իրավաբանական անձի ծածկագիր(կոդը) **49801620**
Հարկ վճարողի հաշվառման համար **02647177**
Իրավաբանական անձի տեսակը **ոչ առևտրային**
Գործունեության ժամկետը **անժամկետ**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"22" 03 2016 թ.

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին

Կ.Տ.

ՆԵՐԴԻՐ 001

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա1042740 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԳԻՏԱ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Գտնվելու վայրը **ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ / Շ / 17 Ք. ԵՐԵՎԱՆ 0010 ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար,
Նախագահ՝ ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԿԱՌԼԵՆԻ
անձնագիր **BA0181193**, տրվ. **2014-03-26, 011** կողմից,
հասցե **ԱԲՈՎՅԱՆ Փ. / Շ / 41 / 5 ԿԵՆՏՐՈՆ 0009 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը —

Այլ տեղեկություններ —

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"22" 03 2016 թ.

Կ.Տ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին